## *ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2*

*ԱՄԱԳՂԱՄԴ-ԳՀ-ԱՊՁԲ-21/1* ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Հայտերի բացման վայրը գ. Այգավան,

Ս. Հովհաննիսյան 43 — հայտերը բացվել են

«Այգավանի Գ.Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ — 26.05.2021թ. ժամը 14:00—ին

*ԱՄԱԳՂԱՄԴ-ԳՀ-ԱՊՁԲ-21/1* ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման /արդյունքների ամփոփման/ մասին

### 1. Հայտերի բացման մասին

1.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 26.05.2021թ.-ին, ժամը 14:00-ին, Արարատի մարզ, գ.Այգավան, Ս.Հովհաննիսյան 43 հասցեում, և համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

1.2 Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին.
Հրավերի վերաբերյալ հարցեր և պարզաբանումներ չեն եղել:

1.3 Ներկայացրած բողոքների և դրանց վերաբերյալ կայացրած որոշումների մասին.
Գնման ընթացակարգի շրջանակներում բողոքներ չեն եղել:

1.4 Հակաօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին.
Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

### 2. Տեղեկատվություն գնվելիք ապրանքի գնի և հայտ ներկայացրած մասնակիցների մասին

2.1 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների կազմակերպման գործընթացի>> կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարկեց գնվելիք ապրանքի գինը մեկ թվով արտահայտված.

| Չ/հ | Ապրանքի անվանումը | Ապրանքի գինը մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | Սննդի ծարոցներ /չոր սննդի փաթեթ/ | 1041400 (մեկ միլիոն քառասունմեկ հազար չորս հարյուր) |

2.2 Սահմանված ժամկետում հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

Հրավերով սահմանված ժամկետներում մասնակցության հայտ են ներկայացվել հետևյալ իրավաբանական անձանց (այսուհետ նաև՝ Մասնակից կամ Մասնակիցներ) կողմից.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հասցե | Հեռախոս | Էլ. փոստի հասցե | Հայտի ներկայացման օրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Նարինե Ավետիսյան» ԱՁ | ՀՀ, Արարատի մարզ, գ.Արարատ, Կոմիտաս 2 | 094-32-28-00 | Narine.avetisyan.2017@inbox.ru | 2021-05-26 |
| 2 | «Ռուզ-Մարտի» ՍՊԸ | ՀՀ, Արարատի մարզ,ք.Մասիս, 9/17 | 077-33-44-77 | harutyunm@gmail.com | 2021-05-26 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0:*

### 3. *Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը հրավերի պահանջներին*

Մասնակիցների կողմից կազմված և ներկայացված ծրարները համապատասխանել են հրավերով սահմանված կարգի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

### 4. *Յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը*

*ԱՄԱԳՂԱՄԴ-ԳՀ-ԱՊՁԲ-21/1* ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված «Նարինե Ավետիսյան» ԱՁ-ն և «Ռուզ-Մարտի» ՍՊԸ -ն փակ ծրարներով ներկայացրել են գնային առաջարկ /մեկ միավորի արժեքը տարվա համար/՝ ինքնարժեքի հաշվարկ, գնման ընթացակարգին մասնակցելու դիմում և հրավերով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմված են մեկ բնօրինակից և երկու օրինակ պատճեններից, որոնց բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

### 5. <u>Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներ</u>

| Չ/Հ | մասնակցի անվանումը | Առաջարկած գինն՝ առանց ԱԱՀ | Առաջարկած գինը՝ ԱԱՀ | Առաջարկած գինն՝ ընդհանուր ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| Չափաբաժին 1 ՝ Սննդի ծարոցներ /չոր սննդի փաթեթ/ | | | | |
| 1 | «Նարինե Ավետիսյան» ԱՁ | 1040000 | 0 | 1040000 |
| 2 | «Ռուզ-Մարտի» ՍՊԸ | 867833,33 | 173566,67 | 1041400 |

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

6. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատման մասին

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Չափաբաժնի համարը |
|---|---|---|
| 1-ին տեղ | <<Ռուզ-Մարտի>> ՍՊԸ | 1 |

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից սույն արձանագրության 2.1-րդ կետով ներկայացված գնահատման թերթիկները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը, այն է. Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝

- «ԱՄԱԳՂԱՄԴ-ԳՀ-ԱՊՁԲ -21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել « Ռուզ-Մարտի » ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

7. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն արձանագրվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

8. Բանակցությունների վարման մասին

Հայտերի գնահատման նիստի ընթացքում բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

## 9. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Հաստատել պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Անգործության ժամկետի ավարտին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

## 10. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

Հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _______ / Լ. Շահվերդյան/

ԱՆԴԱՄՆԵՐ՝ _______ / Զ.Նազոյան /

_______ / Վ.Միրզոյան /

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _______ / Լ. Դումանյան /

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շահերի բախման բացակայության մասին

գ. Այգավան, Սերոբ Հովհաննիսյան 43

26 մայիսի 2021թ.

ԱՄԱԳՂԱՄԴ-ԳՀ-ԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգով Սննդի ծանրոցների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Շահվերդյանս, անդամներ՝ Զ.Նազոյանս, Վ.Միրզոյանս և հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Դումանյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի գնային առաջարկների բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Սույնով ներքոստորագրյալներս հայտարարում ենք, որ «ԱՄԱԳՂԱՄԴ-ԳՀ-ԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցող «Ռուզ-Մարտի» ՍՊԸ-ի և «Նարինե Ավետիսյան» ԱՁ-ի հիմնադիր կամ մասնակից/բաժնետեր չենք հանդիսանում և մեզ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձինք՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր, և/կամ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս ունեցող կազմակերպությունները գնումների այս գործընթացի մասնակիցներ չենք:

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ /Լ. Շահվերդյան/

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ /Զ.Նազոյան/

____________ /Վ. Միրզոյան/

Հանձնաժողովի քարտուղար՝ ____________ /Լ. Դումանյան/